Ավետիք Իսահակյան

Սիրո վեպը

Հոգնել եմ սիրելուց ես արդեն, և տաղտուկ է պատճառում ինձ սիրային վեպը: Սակայն մի փոքրիկ վեպ, սիրո մի թերատ վեպ, միշտ հնչում է իմ ականջում, և լավ չեմ հիշում՝ երազո՞ւմս եմ լսել այդ վեպը, թե՞ արթմնի, ասես հին-հին դարերի մի հեքիաթ լինի այդ, որ հյուսել է մի հարազատ ոգի, հեռավոր մի աշխարհում . . .

Կանաչ ծառի տակ նստել էր մի գուսան՝ կրծքին գրկած մի սազ, որը միայն մի լար ուներ, մի քնքուշ լար:

Կանաչ ծառի մոտով հոսում էր մի երգող առվակ . նրա բյուրեղային ալիքները երգում էին այն ոսկեշող ամպերի մասին, որոնք պսակում են լեռների ադամանդի ճակատները, որտեղից նրանք վայր են ցատկել և երգում էին այն զմրուխտյա դաշտերի մասին, որտեղից հոսել եկել էին կարկաչելով:

Գուսանը մեղմիկ զարկում էր լարին, և հեծկլտում էր լարը և պատմում էր լարը սիրո մի փոքրիկ վեպ:

Հոյակապ դղյակում ապրում էր մի չքնաղ աղջիկ, այնպե՛ս գեղեցիկ, այնպե՛ս գեղեցիկ, ինչպես շուշանագեղ կարապը լճի ոսկեվառ ալիքների վրա: Նստել է պատշգամբում և ասեղնագործում է: Հեռավոր երկրից եկել է մի պատանի . ծնադիր կանգնել է գեղեցիկ աղջկա դղյակի առաջ, պատշգամբի տակ ու սեր է աղերսում .

«Քո սիրո համար ես մոռացել եմ
Հայր և մայր, հայրենիք և աշխարհն ամբողջ
Իմ երջանկությունը քո ոտների տակն է այսուհետ:
Նայիր ինձ գեթ մի անգամ»:

Աղջիկը սակայն չի լսում նրան . ասեղնագործում է նա և երգում:

Նա հիշում է, թե ինչպես մի օր, մի ասպետ նժույգով՝ անցավ դղյակի առջևով . միայն մի անգամ նայեց նրան և ասպանդակեց իր ձին, բայց սիրով խոսեց նրա կուսական սիրտը, իսկ անգութ ասպետը գնաց, գնաց առանց ետ նայելու:

Նա լալիս է անմխիթար, թողել է դղյակը, առել է մի երկաթե ցուպ, թափառում է աշխարհե-աշխարհ, ծեծում է ամեն մի դուռ, նայում է ամեն մի դեմքի՝ գտնելու համար իր սիրած ասպետին, որը գնաց, գնաց . . .

Իսկ հեռավոր երկրց եկած պատանին ծնրադիր՝ նորից սեր է աղերսում և ասում է .

«Հոգիս քաղվում է քեզ համար,
Դարեր և դարեր կկանգնեմ
Քո դռան առաջ ձյունի ու մրրիկի տակ:
Եվ միայն մահը կարող է ինձ բաժանել քեզանից:
Դու ես իմ սերը - իմ կյանքն ու մահը . . . »:

Աղջիկը սակայն չի լսում նրան: Աստեղնագործում է նա և երգում: - Գտել է նա իր սիրածի հետքը, ահա գտել է նաև իր սիրածին . և արտասվելով իր անհուն սերն է հայտնում նրան, բայց, ավա՜ղ, իր երազած ասպետը չի լսում նրան . նա գնում է մի հեռավոր աշխարհ . նա գնում է իր սիրո հետևից, կամ կտիրանա իր սիրուն, կամ ետ չի դառնա, էլ ետ չի դառնա . . .

Օրերն անցնում են օրերի հետևից, և հեռավոր երկրից եկած պատանին ծնրադիր նորից սեր է աղերսում և . . .

Հեծկլտաց քնքուշ լարը, դողաց, թրթռաց և կտրվեց հանկարծ:

Կանաչ ծառի տակ նստած մնաց գուսանը՝ կրծքին գրկած սազը՝ առանց լարի, և սիրո այս փոքրիկ վեպը մնաց կիսատ: Սակայն այն թերատ վեպը միշտ հնչում է իմ ականջում, և լավ չեմ հիշում՝ երազո՞ւմս եմ լսել այն, թե՞ արթմնի, ասես, հին-հին դարերի մի հեքիաթ լինի, որ հյուսել է մի հարազատ ոգի հեռավոր մի աշխարհում:

Թիֆլիս